



Զահրատ

Ես մարգագետինը եմ օրիորդ խաղաղութիւնը

Հոն ուր ծովը կը վերջանայ ու եղենիներուն ետեւ
մարգագետինը կը սկսի
Օրիորդ Խաղաղութեան հետ թեւ թեւի
պարելու գացի

Խոտերուն ու ճերմակ-դեղին մարգարտածաղիկներուն վրայ
Պարեցինք չենք գիտեր քանի պար
քանի տարի

Օր մըն ալ մայրամուտի մը
Երբ քաղքին լոյսերը մէկ մէկ կը վառէին
Հաստ կարմիր շրթներով կին մը նշմարեցի
Ժպտեցաւ ինծի եւ ցուցադրեց գեղեցիկ գիսները
Ես Ձանձրոյթն եմ ըսաւ միաւար ձայնով
Մինչդեռ դեղնած խոտերուն ու թառամած ծաղիկներուն վրայ
Օրիորդ Խաղաղութիւնը մեռաւ ինծմէ առաջ